

633.41:632.5

Ա-22

Միջամարտի Գ. Ազարյան

Բ Ա Մ Բ Ա Կ Ի
Վ Ն Ա Ս Ա Տ Ո Ւ Ն Ե Ր Ը

31 JAN 2013

19.04.6

24 SEP 2010

Հ. Ս. Խ. Հ. ՀՈՂԻ ՓՈՂԿՈՄԱՏԱՏ
№ 66 (166) ԳՅԱԿԱՏԵՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՐԱՄԱՏՏԵԼԻ ԳՐԱԴԱՐԱՆ № 66 (166)

633.4716325

Վ-22

Այց

Միջատարան Գ. ԱԶԱՐՅԱՆ

ԲԱՄԲԱԿԻ
ՎԵԱՍԱՏՈՒՆԵՐԸ

166
34725



Ա. Ա. Մանուկյան
ՀԱՅՈՒՆԻԿՈՎԱ ԱՆԴՐԻ

1932

ՊԱՇՏՈԱՆԵՆՔ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԲԵՐՔԸ ՎՆՍՍՍՏՈՒՆԵՐԻՑ

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման՝ խորհ և կոլտնտեսությունների զարգացման և աճբացման զուգընթաց ընդարձակվում ե տեխնիկական կուլտուրաների, մտանալորապես բամբակի ցանքի տարածությունը:

1932 թվին Միությունում ցանքում է 2,437 հազար հեկտար բամբակ, վորից Խ. Հայաստանում ցանքելու յե 30,000 հեկտար անցյալ տարվա 23000 հեկտարի զիմաց:

Բամբակի տարածության ընդարձակման հետ, մի շարք ագրոտեխնիկական ձեմնաբերկումներ են կատարվում բամբակի բերքատվության բարձրացման համար: Սակայն չնայած դրան, բամբակի բերքատվության բարձրացման գործում մենք ունենք մի շարք թերություններ:

Կուկատիվ տնտեսությունների կազմակերպչական տնտեսական և քաղաքական ամրացմար գյուղատնտեսական նորագույն տեխնիկայի գործարկումով հիմնական խնդիր ե գրաւմ ամենաարագ կերպով բարձրացնել բամբակի բերքատվությունը:

Բամբակի բերքատվության բարձրացման ամենակարենը միջոցներից մեկը վնասատուների գեմ պայքարելու աշխատանքներն են, զայտնիք չե, վոր վնասատուներն ամեն տարի խոշոր վնասներ են հասցնում բամբակին, իջեցնելով բամբակի բերքատվությունը:

Վնասատուներից բամբակին հասցնող վտանգը պետք ե լիկվիդացիաի լնթարկենք՝ կանոնավոր, իր ժամանակին կազմակերպված պալքարի միջոցով: Պայքարի աշխատանքները հաջողությամբ կատարելու համար հարկավոր ե մորֆիկացիաի լնթարկել հասարակական ամենաալայն կազմակերպությունների ուշադրությունը և առաջին հերթին՝ ՊԱԶՀ-Ավիագիմի, ԼԿՅԵՄ և աշակերտական կազմակերպությունները, վորոնք ՈԲՎ-ի ամիջական ղեկավարությամբ պետք ե հանդիսանան վնասատուների դեմ պայքարելու աշխատանքների ամենաակտիվ մասնակիցները:

Գետք ե լով հիշել, վոր պայքարը բամբակի վնասատուների գեմ պայքար ե Խորհրդային Միուրյան բամբակի անկախության համար, պայքար ե բերքատվության բարձրացման համար:

ՊԱՅՔԱՐԻ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿ ԱԳՐՈԿՈՒԼՏՈՒՐ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Մեր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, կոլեկտիվ և խորհրդային սննդեսությունների կազմակերպումն ստեղծել են միանգամայն բարենպաստ պայմաններ՝ լայն չափով կիրառելու մշասատուների գեմ մզկող պայքարի պրոֆիլակտիկ ազգության միջոցները։ Պայքարի ալս մնթողի ելությունն ալն ե, վոր բամբակի կուլտուրայի և հողի նախապատրաստական աշխատանքների ժամանակ իրառում ենք ալնպիսի մշակության ձեռք, վորոնք բամբակի և առկառարժեկան գյուղատնտեսական միասատուների մասայական բազմացման համար միանգամայն անընդունակաստ պայմաններ են ստեղծում։ Այդ իսկ պատճառով, նախքան բամբակի առանձին միասատուների և նրանց գեմ պայքարելու միջոցների մասին խոսելը, անհրաժեշտ և համառոտ կերպով ծանոթանալ պայքարի պրոֆիլակտիկ միջոցներին։

Այդ միջոցները հետեւաներն են։

Պայքար մոլախոտերի գեմ։ ինչպես քէչ հետո կտեսնենք, բամբակի բոլոր միասատուներն ապրում և բազմանում են գլխավորապես մոլախոտերի վրա։ Վաղ գարնանից սկսած, բամբակի բոլոր միասատուներն սնվում և բազմանում են մոլախոտերով, վորոնցից հետագալում անցնում են բամբակի վրա։ Այդպիսով՝ ինչպես տեսնում ենք, մոլախոտերը բամբակի և գյուղատնտեսության բոլոր միասատուների բազմացման և տարածման ոջախներն են։ Այդ իսկ պատճառով բամբակի միասատուների մասսայական բազմացումը կանխելու համար հարկավոր և առաջին հերթին մտածել բամբակի դաշտերում և շրջակային լեղած մոլախոտերի գեմ պայքար կազմակերպելու մասին։

Մոլախոտերը, բացի այն, վոր հանդիսանում են միասատուների բազմացման և տարածման ոջախներ, միաժամանակ խոշոր միասներ են հասցնում նաև հենց իրեն՝ բամբակի բույսին՝ բամբակենուն, վորով հետեւ հողից խոլում են բամբակենու զարգացման համար անհրաժեշտ սննդարար նկութերը, խոնավությունը, տուփեր (շվաք) են գցում բամբակի բուկսի վրա և ալղպիսով խանգարում բամբակի բուկսի նորմալ զարգացումը, հետևապես ազդում նաև բերքատվության վրա։

Այդ իսկ պատճառով պրտք և աշխատել ամբողջ տարվա ընթացքում բամբակի դաշտերը և նրանց գոնե մոտիկ շրջակայիքը մաքուր պահել մոլախոտերից։ Դրա համար հարկավոր և շուտ-շուտ քաղել միջնակներում, առուների ափերին և այլ տեղերում յեղած մոլախոտերը՝ վոչ մի դեպքում թուլ չտուզվ, վոր սերմակալեն, վորովինետև սերմակալելուց, սերմերը թափվելուց և տարածվելուց հետո պայքարը մոլախոտերի գեմ ավելի լի դժվարանում։ Վոչ մի դեպքում թուլ չպետք ետք, վոր բամբակի քաղնանի աշխատանքներն ուշանան։

Քաղնանն անելուց անմիջապես հետո պետք է քաղնանած մոլախոտերը դաշտից հեռացնել, վորովինետև լիթե ալդ մոլախոտերը յերկար ժամանակ թողնենք բամբակի դաշտում, ապա մոլախոտերը կը քաղնան և նրանց վրա լեզած բոլոր միասատուները կքաշվեն բամբակի բուկսերի վրա և վերջին հաշվով վնասն ավելի մեծ կլինի։

Աջնանը, բամբակի բերքը հավաքելուց հետո, դաշտում լեղած բոլոր մոլախոտերը, բուսական մնացորդները պետք և հավաքել և դաշտից հեռացներ, վորովինետև նրանց վրա ձմեռում և բարակի վնասատուների մի մասը։

ՈՒԾ ԱՇՆԱՆ ՀԵՐԿԵ

Բաբակի բոլոր վնասատուներն ալս կամ այն վիճակում ձմեռում են հողի մեջ, հողի ճեղքվածքներում, դաշտում թափված բուսական զանազան մնացորդների վրա և այլն։ Այդ ձմեռող վնասատուների գեմ պայքարելու տեսակետից շատ մեծ նշանակություն ունի ուշ աշնան հերկը։

Ուշ աշնան հերկը, բացի այն, վոր նպաստում և հողի մեջ տեղի ունեցող մի շաբթ միկրոբիոլոգիական պրոցեսների, կուտակում և խոնավություն, բացի մոլախոտերի զեմ պայքարելուց և այլն առավելություններից բերքատվության բարձրացման գործում, ունի նաև այն առավելությունը, վոր հերկի մեջ ձմեռող զնասատուների հաբույակները հողի լերեսը, կամ ընդհակառակը, շատ խորն ընկնելով՝ վոչընշանում են։

Ուշ աշնան հերկը հատկապես շատ լավ արդյունքներ և տալիս, յեթե այդ հերկված արտերը ջրում են, ձմեռն առար են անում, Զըմուն ջուրը բացի այն, վոր խոշոր չափով նպաստում և ցմեռող վնասատուների վոչնչացմանը, միաժամանակ և մոլախոտերի զեմ պայքարելու հողի մեջ խոնավություն կուտակելու գործին, միենուն ժամանակ վարի հետեւանքով առաջացած մեծ-մեծ կոշտերը (հատկապես իոպան հողեր վարելուց հետո) վոչնչացմանը համար ամենալավ մի չոցներից եկն է։

ՊԱՐՄԱՐՏԱՅՈՒՒՄ

Խորհրդավոր Միության բազմաթիվ գիտահետազոտական փորձնական կայաններում կատարված փորձերը ցուց են տվել, վոր վնասատուների գեմ պայքարելու ամենադորեն միջոցներից մեկն եւ հողի լավ պարարտացումն է։

Նկատված է, վոր վնասատուների հասցրած-վնասը բուկսին հատկապես աչքի յի ընկնում այն զեղքերում, յերբ ալդ բույսերը հողի

վատ պարաբռացման, մոլախոտերի դեմ վատ պայքարելու և այլ պատճառներով թույլ ու նվազ են:

Վնասատուները վնասելով ալդ թույլ, նվազ բուլսերի այս կամ այն մասը, բույսը չի կարողանում այդ վնասված մասերը վերականգնելը վորի հետեանքով և բերքն զգալի չափով պակասում է:

Այդ նույն ինքնութեան տեղի ունի նաև բամբակի նկատմամբ, և վնասատուների (հատկապես բամբկի չոռի) հաւցրած վնասը բամբակին՝ խոշոր չափերով զգացվում է այն դաշտերում, վորտեղ վատ պարտացման, վատ մշտկութան և այն պատճառներով բամբակի բուլսերը թույլ, նվազ են լինում: Իսկ բամբակի առողջ բուլսեր ստանալու ամենալավ միջցներից մեկն ել հանդիսանում է բամբակի հողերի կանոնավոր պարաբռացումը, վորը հատկապես և անպայմանուրեն պիտք ե կատարել և այն հողերում, վորտեղ մի քանի տարի անընդհատ բամբակ և մշտկ լին:

Կարձ աստծա բամբակի վնասաշարների դեմ պայքարելու պրոֆիլակտիկ ագրոկուլտուր միջոցները մտնում են ամբողջությամբ ազդուկում մեջ, և ազդուկում ալեքսը՝ կիրառելով, մենք միաժամանակ կիրառած կլինենք նաև վնասատուների դեմ պայքարելու պրոֆիլակտիկ միջոցները:

Իսկ ազդուկում մեր ներկա կողեկանի և խորհրդային տընտեսութիւնների պայմաններում կարող ենք և պետք և լրիվ կիրառենք և դրանով ազանովներ բամբակի բերքատվութիւն բարձրացումը:

ԲԱՄԲԱԿԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Բամբակը, ցաներու որվանից սկսած մինչև բերքահավաքը, լինաթակա յե բազմաթիվ վնասատուների հարձակման: Այդ վնասատուների թիվը շատ ե, բայց մենք այստեղ կանգ կառնենք այն մնասատուների վրա, վորոնք Հայաստանում բամբակի ամենազլիսավոր վնասատուներն են և վորոնք իրենց մասսայական բազմացման տարիներին՝ հսկալական վնասներ են հասցնում մեր զբուղատնտեսութիւնը:

Այդ վնասատուները հետեւաներն են:

1. Բամբակի չոռը,
2. Ազրոտիսը,
3. Կարազրինան,
4. Բամբակի լիճը,
5. Բամբակի կնքուղի թրթուրը:

ԲԱՄԲԱԿԻ «ԶՈՌ»Ը

Խորհրդավին Միութիւն վոչ մի շրջանում բամբակի ալս վնասատուն ալնքան շատ տարածված չի ու այնքան վնաս չի հասցնում բամբակին, վորքան Հայաստանում և մեր հարսան Նախիջևանի վ և. Հ. ում:

Այդ բացատրվում է նրանով, վոր մեր բամբակագործական շըրջանների կիմայական, հողային և այլ պահանջման բարենպատ են ալս վնասատվի զարգացման համար:

Վորպեսդի կարողանաք բամբակի վնասատուն երի դեմ հաջող կերպով պարաբել, անհրաժեշտ ե գոնե համառոտ կերպ՝ ծանոթանալ նրանց բիոլոգիային—կյանքի ձեին, վորի հիման վրա հետազում կիրառել պատքարի համապատասխան միջոցներ:

Սովորաբար, հունիսի սկզբներից սկսած բամբակի դաշտերում, հատկապես միջնակներին, ճանապարհներին, առուներին մոտ գտնված մասերում, վորտեղ շատ մոլուստեր են լինում, և ամբուկի տերեների վրա սկսում են յերեալ կարսիր բծեր—նշաններ:

Յնթե ալդ հիգանդ տերեները ներքեի կողմից ուշադրութիւնը նայենք, նուրբ գործած վոստանեների տակ նստած կտեսնաք հասարակ աչքով հազիվ տեսանելի, կանաչ—բաց գեղնավուն գունի օգեր: Այդ նույն տեղում, յեթե խորացուցցով նայենք, կտեսնենք նաև չոռի հասունացած փոքրիկ սգեր և չոռի բաց—կանաչավուն գունի ձվեր Չոռի տղերը ծծում են բամբակի տերեներից սննդարար նուրենք, վորին հետեւանքով վնասված տեղերում տերերը զերեի կողմից կարմբում են:


Յնթե ժամանակին համապատասխան պայքարի միջոցների չղիւմներ, կարմիր բծեր սկսում են յերեալ բամբակի ամբողջ դաշտում:

Վարակված տերեների վրա կարսիր բծերն աստիճանաբար մեծանում են, կամիր գունը փոխվում է գորշագույնի, տերեները կուչ են գալիս, չորանում և թափվում:

Ինչպես զիտենք, բուլսերի համար լաւերը հանդիսանում են այն լարութուրիան, վորտեղ տերեների մեջ լեղած քլորոֆիլի կանաչ հատիկները, արեի ճառագլութիւնների ազդեցության տակ, ողից վերցրած գաղերի և արմատների միջոցով հողից վերցրած հանքային նյութերի



միջոցով պատրաստում են բույսի աճման համար անհրաժեշտ սննդարար նորութեր:



Նկ. 2. Չոռից տերևազուրկ յեղած բամբակենի:

Եթից և սկսում մնվել ու բազմանալ մոլախոտերի վրա:

Հունիսի սկզբներին, չոռի տղերն սկսում են անցնել բամբակեների վրա, և այդ ե պատճառը, վոր բամբակի գաշտն առաջն հերթին սկսում ե վարակվել մոլախոտերին մոտ գտնված մասերից (միջնակեների, ճանապարհների, առուների մոտ գտնված մասերից):

Ասեն մի չոռի եղ տիզ իր կյանքի ընթացքում կարող ե ածել 100—150 ձու, վորոնցից նայած տարվա յեղանակին, 3—20 որ հետո դուրս են գալիս չոռի թրթուրները, վորոնք հասուն տղերից տարբերվում են իրենց մարմնի փոքրությամբ և գանդաղաղարժությամբ:

Ասպարագ տաք յեղանակներին չոռի զարգացումը, ձվից սկսած մինչև հասուն տիզ դառնալը, վոր ընդունակ ե ձու ածելու, 8—12 որ և առում:

Վաղ զարնանից սկսած մինչեւ աշուն մեր բամբակործական շըր ջաններում չոռը 16—20 սերունդ ե տալիս:

Չոռի հետևանքով բամբակի բույսը զրկվելով իր տերևների մի մասից, իսկ չոռի մասսայական բազմացման տարիներին՝ տերևների մեծ մասից, բույսի զանազան մասերը չեն կարողանում նորմալ կերպով սնվել և ածել, վորի հետևանքով քիչ կոկոններ և կնգուղուներ են առաջանում, իսկ յեղած կընդուների և դեռ չբացված կոկոնների դգալի մասն ել թափվում ե:

Այդ ե պատճառը, վոր չոռի մասսայական ուժեղ բազմացման տարիներին բամբակի բերքատվությունն ուժեղ չափով իջնում ե:

Բամբակի այս վեասառառուն ձմեռում ե հասուն վիճակում բամբակի դաշտերի և միջնակեների մոլախոտերի վրա, դաշտում թափված բամբակի չորացած տերևների և կնգուղների վրա, հողի ճեղքածքներում և այլն:

Վաղ զարնանը յեղանակները տաքանալուց հետո, յերբ մոլախոտերն ու ուռում են ածել չոռի ձմեռած տղերը դուրս են գալիս իրենց ձմեռանցներից և սկսում ե ածել:

Հունիսի սկզբներին սկսում են անցնել բամբակեների

արվա ընթացքում բամբակի առողջ արտոն ամբողջովին վարակվում ե չոռով:

Չոռի ուժեղ ե արագ բազմացմանը նպաստում են չոր և շոր յեղանակները, և նկատված ե, վոր հայաստանում չոռն ամենից շատ մնաներ հասցնում ե չորացին և տաք տարիներին:

Մյուս կուտուրական բայսերից, վորոնք մշակվում են մեր բամբակագործական շրջաններում, չոռն ամենից լավ զարգանում ե սեխի, (լիմիշ) վարունգի, դութմայի և մի շարք այլ բանջարանոցալին բույսերի վրա:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻԶՈՑՆԵՐԸ

ա) ԱԳՐՈԿՈՒԼՈՏՈՒՐ ՄԻԶՈՑՆԵՐԸ

Ինչպես չոռի բիոլոգիալի նկարագրությունից տեսանք, չոռի կյանքը սերտ կերպով կապված ե բամբակի դաշտի մշակության և հատկապես մոլախոտերի գոյության հետ: Այդ իսկ պատճառով, բամբակի չոռի դեմ պարբերու համար, վորպես արմատական միջացներ, պետք ե կիրառել հետևելու:

1. Աշնանը բամբակի բերքը հավաքելուց հետո անպայման պետք ե բամբակի դաշտը վարչել, վորը, բացի այն, վոր ընդհանրապես քարձրացնում ե հողի բերքատվությունը, ունի նաև այնկարեսոր նշանակությունը, վոր դաշտում ինչպատճեն մոլախոտերը, բամբակենու թափված տերևները, կնգուղները և այլ բուսական մնացորդները, վորոնց վրա ձմեռում են չոռի տղերը, հերկի միջոցով հողի տակ են անցնում և գոչնչանում:

2. Աշնանը բամբակի դաշտերի շրջակալքում լեղած բուսաններում պետք ե հավաքով և այցել, կամ դաշտից հեռացնել բոլոր բուսական մնացորդները, գորովհետեւ այդ բուսական մնացորդների վրա մեծ շմբերով ձմեռում են չոռի տղերը:

3. Բամբակի դաշտերն անպայման պետք ե պարարտացնել, հատկապես այն դաշտերը, վորտեղ մի քանի տարի անընդհատ բամբակ և ցանվում: Պարարտացման միջոցով հնաբավոր ե ստանալ առողջ, ուժեղ բամբակենիներ, վորոնք, ինչպես զիտենք, ավելի զիմացկուն են չոռի հասցրած վնասներին, քան թուզը նվազ բամբակենիները:

4. Բամբակի դաշտը և նրա շրջակալքն ամբողջ տարվա ընթացքում պետք ե մաքուր պահել մոլախոտերից: Նրա համար վոչ սի դեպքում չպետք ուշացնել բամբակի քաղցանի աշխատանքները, իսկ միջնակեների, առուների ափերին յեղած մոլախոտերը պետք ե շատ շուտ քաղել և դաշտից հեռացնել:

Յեթե վերը հիշված պալքարի ագրոկուլտուր միջոցները չեն կիրառված, կամ կիրառված են վոչ լիվ ու ժամանակին, վրի հետեւնքով բամբակի դաշտերում սկսել և յերեալ չոռք, ալդ դեպքում առանց ուշացնելու պետք և դիմել քիմիական պալքարի կազմակերպմանը:

բ) ՊԱՅՔԱՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Դրամական համարկութիվ հիմնարկությունների և համապես Զականիի բի (Զականի Հայաստանի առողջապահության գործադրությունների և առողջապահության գործադրությունների մասին) համարած բազմաթիվ փորձերը ցույց են տվել վոր բամբակի չոռքի դեմ պայքարելու համար ամենալավ քիմիական նյութը՝ ծծումբն:

Բացի այն, վոր ծծումբը բամբակի չոռքի դեմ պալքարելու ամենալավ միջոցն ե, մաժամանակ և լավ պարարտանյութ և ալդ, ուստի և ծծումբի գործածությունն ամեն կերպ պետք և խրախուսել. ինչպես վերը տեսանք, բամբակի դաշտն սկսում է վարակվել մոլախոտերին մոտ գանգած մասերից, վորոնցից և տարածվում է բամբակի դաշտի մյուս մասերը:

Այդ իսկ պատճառով բամբակի առաջին փոշոտումը համատարած չպետք և անել, այլ պետք և փոշտել միայն այդ վարակված մասերը, վորպեսզի կանխիենք չոռք արագ տարածումը: Հետագայում յեթե բամբակի ամրող դաշտը վարակվի չոռվի, այդ դեպքում պետք և կատարել համատարած փոշոտում՝ պետք և փոշտել ամրող դաշտը:

Միջին հաշվով, համատարած փոշոտման համար պետք և գործ ածել հեկտարին վոչ ավելի քան 32 կրլոգրամ (2 փութ). ծծումբ:

ՓՈՇՈՏՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ


1. Բամբակի դաշտը, նախքան ծծմբի փոշով փոշտելը, պետք և քաղանել և հետացնել բամբակի դաշտում լեղած բուրու սոլախոտերը հակ լեթ այդ չի կատարված, պետք և փոշտել նաև դաշտում լեղած մոլախոտերը:

2. Փոշոտմբ պետք և կատարել խաղաղ լեղանակին, վորպեսզի ծծմբի փոշին հավասարաշափ ստի բուրու փոշոտված բուրուն իրաւութիւն առաջանալ համար ամենալավ ժամանակը վաղ առավոտն ե, յերբ քամբիներ չկան:

Վաղ առավոտյան փոշոտելն ունի նաև այն առավելությունը, վոր բամբակի տերեները խոնագ են լինում և ծծումբի փոշին լավ և կը զում բամբակի տերեներին:

3. Յութե փոշ առաջից հետո շատ ուժեղ անձրեներ են գալիս, պետք և փոշոտումը նորից կառարել:

Մինչև 1930 թիվը ծծմբի փոշոտությունների կատարվում եր միայն ձեռքի փոշություններով (տիպ-տոպ, գրյուն և այլն), իսկ 1930 թվին բամբակի չոռքի դեմ պայքարելու համար առաջին անգամ սկսեցին գործ ածել ոգանակը:



Նկ. 3. Ողանակը՝ փոշոտելու գործողությունը կատարելիս:

Քանի վոր բամբակի մնասատուների դեմ պալքար կազմակերպելու համար ողանակը օւնի զարգացման շատ մեծ հեռանկարներ, այդ իսկ պատճեռով ավելորդ չենք համարում ալստեղ փոքրիկ ծանոթություն տալ այդ նոր մեթոդի մասին:

Գյուղատնտեսական տեխնիկայի ամենավերջին նվաճումներից մեկն Ողանակի ոգտագործումն ե գյուղատնտեսության մեջ և հատկապես գյուղատնտեսության զանազան մնասատուների և հիվանդությունների դեմ պալքարելու գործում. Խորհրդային Միության մեջ առաջին փորձնական աշխատանքներն ողանակերի միջոցով մնասատուրերի դեմ պալքարելու համար կատարվել են 1926—27 թվականներին:

Չնայած այս կարճ ժամանակամիջոցին, մեզ մոտ գյուղատնտեսական ավիացիան ձեռք և բերել հսկայական հաջողություններ:

Մեր գյուղատնտեսական ավիացիան իր հնգամելա պլանը կատարեց 3 տարում, գյուղատնտեսության զանազան մնասատուների դեմ պալքար կազմակերպելով 350.000 հեկտար տարածության վրա (Խ. Ս. մասշտաբով):

Գյուղատնտեսության մնասատուների դեմ ողանակի միջոցով պալքարելու ունի այն առավելությունը, վոր՝

1. Պալքարի աշխատանքները կատարվում են չափազանց արագ,

վորը շատ կարենոր հանգամանք ե, յեթե ինկատի ունենանք վնասա-
տուների արագ զարգացումը, յերբ հաճախ անհրաժեշտ ե լինում 2-3
որվա ընթացքում վոչնչացնել տվյալ վնասատուն հսկայական տարա-
ծությունների վրա:

2. Խնայվում են պայքարի համար անհրաժեշտ քիմիական նյու-
թերը:

3. Ազատում ե մեծ քանակությամբ շիստավորական ձեռքեր, վո-
րոնց կարելքը հատկապես ներկայումս շատ խոշոր ե, յերբ հաճախ
բամբակի ռշակության և խատանքները ժամանակին չեն կատարվում
աշխատավոր կան ձեռքելի պակասության պատճառով և այլն և այլն:

Ողանակը գյուղատնտեսության մեջ բացի վնասատուների դեմ
պայքարելուց, գործ ե ածվում նաև մի շարք ուրիշ նպատակներով:

Այս որի վրա ավելանում են գյուղատնտեսության այն ճյաւղերը,
վորտեղ հնարավոր ե ոգտագործել ողանակը:

Արևին ողանակն ոգտագործվում ե հանքային պարարտանյութեր
շաղ տալու, շաղացան ըրինձ ցանելու, զանազան խոտաբուլսեր և
շաղացան հացաբուլսերը ցանելու համար, մալարիայի մոծակի թթվաւ-
րի դեմ պայքարելու, անտառները հբղեներից հանգնելու համար և
այլն և այլն:

Առաջիկա հնագամլակում գյուղատնտեսական ավելացիան չափա-
ված թորիչ ե գործելու դեպի առաջ:

Վորպեսզի հնարավոր լինի դաղափար կազմել գյուղ. ավելացիայի
զարգացման հետանկարների մասին, անհրաժեշտ ենք համարում բե-
րել մի քանի թվեր:

Խորհրդակին Սիության ավելուպարկը	1931 թվին	աշխատել ե
ընդամենը		3000 ժամ
1932 թվին հախատեսվում ե		36 000 ժամ
1933 » » »		1.100.000 ժամ
1937 » » »		10.000.000 ժամ

Ավելացիայի միջոցոցով 1937 թվին պայքար ե կաղմակերպվելու
վնասատուների դեմ 15.200 000 հեկտար տարածության վրա և այնու
վեցական հեղամյակի վերջում գյուղատնտեսության բոլոր վնա-
սատուների դեմ պայքարելու գործում ավիօմերոզք լինելու յի գե-
րիշուղը յեզ բիմիական պայքարի աշխատեների 75% կատարելու

յի սպանակի միջոցով:

Գյուղատնտեսական ավելացիայի զարգացման այդ առաջ տեմ-
պերն ասում են այն, վոր ողանակը մոտիկ ապագայում դառնալու
յի մասսայական գյուղատնտեսական մեթենաներից մեկը:

Հայաստանում բամբակի չոռի դեմ պայքարելու համար ավիոմե-
թողն առաջին անգամ կիրառվել է 1930 թվի ամառը, Ղուրդուղուլու
շրջանի բամբակի դաշտերում:

Այդ աշխատանքները մեծ մասամբ փորձնական բնույթ ունելին
և նբանց նպատակն եր պարզել ողանակի միջոցով փոշոտած ծծումը
ազդեցությունը չոռի տղերի վրա:

Փորձերը միանգամայն զրական արդյունքներ տվին և 1931 թվին
արդեն ավիոմեթոդով բամբակի չոռի դեմ պայքարելու համար ծծումը
փոշով փոշոտվել և Հայաստանում 4148 հեկտար բամբակ:

Նորկայում Խորհրդային Միության բամբակագործական զանա-
զան շրջաններում կատարվում են բազմաթիվ փորձեր, Ավիոքիմ մե-
թոդը բամբակի մյուս վնասատուների դեմ պայքարելու համար ևս կի-
րառելու ուղղությամբ:

Այդ փորձերի նախնական արդյունքներն ասում են այն, վոր ա-
ռաջիկա 2-3 ասրիների ընթացքում բամբակի բոլոր վեաստոնենի
գեմ բիմիական միջոցներով պայքարելու զարծում Սվիոբիմ մերոզը
զերիչիոզ գեր և կատարելու:

Ա Գ Ր Ո Տ Ւ Ս Ի Ս

Ազրոտիսի թրթուրները բամբակին վնաս են պատճառում սերմը
ցանելու մոմենտից սկսած մինչեւ բամբակինու 4-5 ասրեանի դառնալը:

Այս վնասատուն հալաստանում առաջանաբար տարածվում ե և
պետք ե սրա դեմ պայքարը կազմակերպելու աշխատանքներին լուրջ
ուշադրություն դարձնել: Սովորաբար ագրոտիսը մեզ մոտ վնասներ
և հացանում միայն ենթածնի շրջանի զինա հողեր ունեցող մի շարք
գյուղերի բամբակի ցանքսերին (Ներքին Խաթունարխ, Ղարաղլաղ,
Շորլու Դեմուրչի, Շորլու Մելիմանգար և այլն):


Իսկ 1931 թվի գարնանը, համաձայն ՈԲՎ.ի տվյալների, ազրո-
տիսի թրթուրները յերկացել են և դգալի վնասներ հասցըել եղմիածնի
և Ղամարլի շրջանների 19 գյուղերի բամբակի գաշտերում, գորոնց
դեմ 401 հեկտար տարածության վրա պայքար ե կազմակերպված
յեղել:

Ազրոտիսի թրթուրներից ուժեղ վնասված լինելու պատճառով
10 հեկտար բամբակ կանացան և այլն, Մեր բամբակագոր-
ծական շրջաբաններում այս վնասատուն ձմեռում ե վորպես թրթուր մի-
ջնակների մոլախոտերի արմատների արանքին: Հասակն առած թերը-
թուրներն մութ մոխրագույն են լինում՝ յուղային փալով:

Վաղ գարնանը, յերբ դեռ բամբակը չի ցանված, ազրոտիսի թըր-
թուրները սնվում են միջնակների և բամբակի գաշտում լեղած մոլա-

խոսերով, գլխավորապես «յեղան լեզու» կոչված մոլախոտով, իսկ բամբակը ցանելուց հետո անցնում են բամբակի դաշտերը և սկսում իրենց վնասակար աշխատանքը:

Յեթե ազրոտիսի թրթուրներով վարակված բամբակի նոր ծլած դաշտն ուշադրութիւնը զննենք, կտեսնենք բազմաթիվ բամբակի բույսեր, վորոնց շաքիւլին տերեների վրա կան միատեսակ անցքեր, իսկ մյուս կողմից ել կտեսնենք հողի վրա ընկած, կտրված կրծոտված բաղմաթիվ բամբակենիներ:



Նկ. 4. Ազրոտիսի թրթուրներով վնասակած շաքիւներ



Նկ. 5. Ազրոտիսի թրթուրը կրծում և բամբակենու ցողունը:

Յեթե այդ կտրված բույսերի շուրջը հողը փորփրենք, կտեսնենք արմատի մոտ կուչ յեկած ազրոտիսի թրթուրներին, վորոնք ցերեկները հողի մեջ են լինում և միայն գիշերներն են դուրս գալիս սնվելու:

Հունիսի սկզբներին ազրոտիսի թրթուրներն սկսում են հողի մեջ հարսնակ դառնալ: Հարսնյակ դառնալուց հետո այլևս բամբակին չեն վնասում:

Հարսնյակներից 15—20 որ հետո դուրս են գալիս ազրոտիսի թրթուրները, վորոնք ցերեկները հանգիստ նստած են լինում մութ աեղերում և միայն արևը մայր մտնելուց մի քանի ժամ հետո սկսում են թռչել ու զանազան մոլախոտերի վրա ձվեր ածել: Ձվերից 3—5 որ հետո դուրս են գալիս ազրոտիսի փոքրիկ թրթուրները, վորոնք սնվում են մոլախոտերով, մեծանում հարսնյակ են գտնում և ալն:

Մեզ մոտ ազրոտիսը տարեկան 2—3 սերունդ է տալիս. բայց բամբակի համար, ինչպես վերել տեսանք, վնասակար և միայն ձմեռող սերունդը:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

ա) ԱԳՐՈԿՈՒԼՏՈՒՐ ՄԻՋՈՑՆԵՐ

1. Ինչպես ազրոտիսի բիոլոգիալի նկարագրությունից տեսանք, այս վնասատվի կյանքը սերտ կերպով կապված է մոլախոտերի հետ: Այդ իսկ պատճառով այստեղ ես պալքարի հիմական միջոցներից մեկը պարտք և համարել սիստեմատիկ պալքարը մոլախոտերի դեմ:

2) Աշնանը խորը հերկ պետք է կատարի, միաժամանակ վարելով նաև միջնակները, Աշնան հերկի նշանակութեան մասին առված և պալքարի ազրոկուլտուր միջոցների մասում:

բ) ՊԱՅՔԱՐԻ ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Նկատված է, վոր հաճախ ազրոտիսի թրթուրները բամբակի շըրջակայթում լեզած միջնակներից կամ անմշակ, մոլախոտերով ժամկված դաշտերից բամբակի ցանքսի ժամանակ քաշվում են բամբակի դաշտերը:

Այդ կանինիու համար պետք է բամբակի դաշտերը չեղոքացնել այդ վարտկված հողամասերից: Այդ պետք է կատարել հետևյալ ձևով. Բամբակի դաշտի այն մասի շուրջը, վոր գտնվում է վարակված հողամասերի մոտ, պէտք ե փորել առուներ՝ 25—30 սանտիմետր բարձրությամբ: Առուները փորելու աշխատանքներն արտգացնելու համար հորկավոր ե գործանի միջոցով ակու անել, հետո բաների միջոցով հողը մաքրել և առվի պատերին ուղղանայաց դիրք տալ, վորպեսզի առվի մեջ ընկած ազրոտիսի թրթուրներները նույից չկարողանան դուրս գալ:

Պայքարի այս ձևը հարմար է հատկապես այն գուղերի համար, վարաեղ ստորիերկրյա ջրերը շատ մոտ են հողի մատերիան և փորված առուներն իրենք իրենց լցվում են ջրով: Ազրոտիսի թրթուրներն ընկնելով առուների ջրը մեջ, հուտությամբ սատկում, վորնչանում են:

Խորհուրդ ե տրվում պայքարի այս միջոցը կիրառել միայն այն գեղըռում, յերբ զանազան պատճառներով հնարավոր չե քիմիական պայքարի կազմակերպումը:

գ) ՊԱՅՔԱՐԻ ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ազրոտիսի թրթուրների դեմ պայքարելու գիմիական միջոցներից առենից լավ արդյունքներ են տալիս զանազան թունավորված դրական այլություններ: Պայքարի ալի ձեր հյութունն ալն ե, վոր վերցնում են վնասատվի սիրած կերը (բամբակի քուսպի ալլուր, ալլուրի թեփ, զանազան կանաչ բույսեր և ալն), թորինավորում զանազան թունավոր զանազան կանաչ բույսեր և ալն), թորինավորում զանազան թունավոր վարակված նյութերով և յերեկուան կողմը շաղ տալիս ազրոտիսի ազրոտիսի վարակված

բամբակի դաշտերը, թթուրներն ուտելով իրենց սիրած կերը, թռւնավորվում են և սատկում:

Թունավորված գրվանյութներ պատրաստում են հետեւյալ ձեռք։ Գետք և լուրացանչուր 25 կիլոգրամ բամբակի քուսպի ալյուրին կամ ալյուրի թեփին խառնել մեկ կիլոգրամ պարիզյան կանաչի փոշի կամ մկնդեղաթթվալին նատրի և ջուր ալիքացնելով այնքան խառնել, մինչեւ վոր ստացվի հողի նման փուխր զանգված։ Լովի պատրաստիած զրավչանյութի մասնիկները բոռնցքի մաշ սեղմելիս պետք եւ իրար կպչեն, իսկ հողի վրա զցնիլու նախ քան հողին կպչելը, պետք եւ բաժանվեն։

Դրավանյութը պետք եւ պատրաստել զարակված դաշտերից վոչ հեռու, յերեկոյան կողմը և պատրաստելուց հետո անսիջապես շաղատակարկված դաշտերում։ Ազրոտիսի թթուրները, զիշերը հողից դուրս գալով, ուտում են շաղ տված թունավորված զրավչանյութերը և վոչնչանում։

Ամեն մի վարակված հեկտարին պետք եւ շաղ տալ 40—50 կիլոգրամ զրավչանյութ։ շաղ տալու համար պետք եւ զրավչանյութը լցնել պարկի մեջ և ման դալով վարակված դաշտում, շաղ տալ ալնպնս, ինչպես շաղացան ցորեն են ցանում։

Դարնանը, նախ քան բամբակի ցանքս կատարելը, պետք եւ հետազոտութեագութիվ վարակված գուռերի դաշտերը՝ պարզելու համար վնասատվի չափը, զրութիւնը և յեթապարզվի, վոր վտանգակա բաժը կի ցանքսերին վսասելու, այդ դեպքում պետք ենախքան բամբակի ցանքս կատարելը ցանքսի հետ միտուն շաղ տալ նաև թունավորված զրավչանյութ և թեթև փոցիսել։

Գետք և թունավորված զրավչանյութ շաղ տալ նաև բամբակի դաշտերին մոտիկ գտնված և ուժեղ վարակված միջնակերում ու աճամազակ հողերում, վորպեսզի այդ տեղերից ազրոտիսի թթուրները չանցնեն բամբակի դաշտերը և վնաս պատճառեն բամբակին։


Դրավչառյութ շաղ տված դաշտերում և միջնակներում 15 որ անասուններ չպետք ել թողնել, վրոշինեան, ինչպես զիտենք, թե բամբակի քուսպը և թե ալյուրի թիփը մեր տնային կենդանիների ամենասիրած կերից են և այդ թունավորված զրավչանյութերն ուտելով, կենդանիները կարող են թունավորվել ու սատկել։

Կ Ա Ր Ա Դ Ր Ի Ն Ա

Կարագրինոն սովորաբար ապրում եւ առվուլտի (լոնջալի) վրա և միայն մասսայական բազմացման տարիներին և վնասում նաև բամբակին, ինչպես այդ տեղի ունեցալ Հայաստանում 1926 և 1929 թվերին,


Բացի բամբակից և առվուլտից, կարագրինան վնաս եւ պատճառում նաև ճակնդեղին, կարտոֆիլին, պամիդորին, սոխին և մի շարք ուրիշ կուլտուրական բույսերի։ Վնասում եւ գլխավորապես բամբակի տերքները և գեր չբացված կոկոները, շատ հազվագույշ դեպքերում վնասում եւ նաև փոքրիկ կնօտուղները, Կարագրինան Հայաստանում ձմեռում եւ հավանաբար զորպես հարսնյակներ, վորոնցից վաղ գարնանը զուրս են զալիս թիթեռներ, վորոնք իրենց ձվերն ածում են զանազան մոլախոտերի և սովույտի վրա։ Զգեր ածում են կույտերով, բույսի զանազան մասերի և գլխավորապես տերեների ցածի լերեսի վրա։

Կարագրինալի ամեն մի եղ թիթեռ իր կլանքի ընթացքում կարող եւ ածել 1000⁺ իսկ յերբեմն նաև ավելի ձվեր մի քանի որից հետո նայած տարվա լեզունակներին, ձվերից զուրս են զալիս փոքրիկ թըրթուրներ, վորոնք առաջին որերը միասին են ապրում, իսկ մի քանի



Նկ. 6. Կարագրինալի վնասված բամբակենու տերեր։

սրից հետո իրարից բաժանվում են, Փոքրիկ թթուրները վնասում են տերեների միայն ներքեմի յերեսը, չվնասելով տերերի վերեի յերեսը, իսկ 2—3 անգամ մտնելու հետու առաջնակ է առաջնակ տերերը, իսկ թթուրները բավակա.



Նին՝ մեծանում են, սկսում են վնասել նաև տերեի վերեկի լերեսը և ոերեների վրա առաջ են բերում մեծ-մեծ անցքեր։

Կարաղրինի թրթուրների մարմինը մերկ է, մազիկներով ծածկված չե, իսկ գույնը գլխավորապէս կանաչավուն է։

Հինգ անգամ մաշկո փոխելուց հետո կարաղրինալի թրթուրները հասնում են իրենց լրիվ հասակում (վերջին հասակում թրթուրների մարմարի լերկարությունը հավասար է $2 - 2\frac{1}{2}$ սանտ.), վորից հետո մտնում են հողի մեջ՝ հարսնյակ դառնալու։



Նկ. 7. ա) կարաղրինալի թիթեսը, բ) թրթուրը, գ) հարսնյակի կոկոնը,
դ) վասպած առվույտը

Ամառվա տաք յեղանակներին կարաղրինալի թրթուրի դարդացումը շատ արագ է կտարավում, յերբեմն 15—20 որ տևելով։

Կարաղրինալի թրթուրները, նախ քան հարսնյակ դառնալը, հողի մեղքվածքներում հողի լերեսին դտնված կոշտերի ներքերի մասում կամ ուղղակի հողի մեջ պատրաստում են հատուկ, հարսնյակի համար ամուր կոկոններ—բներ, վորտեղ և թրթուրը հարսնյակ և դառնում, հարսնյակներից տմառը 8—10 որ հետո դուրս են դալիս կարաղրինալի մոտ 1 սանտիմետր մեծություն ունեցող թիթեսներ, վորոնք գիշերները թռչելով բաժբակի, առվույտի և ալլ բուլսերի վրա, ձվեր են ածում։ Հալաստանում այս վասատուն տարնեան տալիս ե 3—4 սերունդ, վորոնցից բաժբակի համար ամենից վատնդավորն և հունիսի ամիսների սերունդը։

Նկատված է, վոր կարաղրինալին թրթուրները սննդի պակասության պատճառով դաշտից դաշտ են տեղափոխվում, այդ հատկապես աեղի յե ունենում առվույտի դաշտերը հնձելուց հետո, յերբ կարա-

դրինալի թրթուրները կեր գտնելու համար քաշվում են հարեան գաշտերը։

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐ

ա. Ագրոկուլտուր միջոցները

Բացի պուրագի ազրոկուլտուր միջոցներից, վոր զրքուկի առաջին մասում նկարագրված են, ալստեղ հատկապես պետք ե խորհուրդ տալ նաև հետեւալը։

1. Ամառվա ընթացքում, յերբ կարաղրինան դեռ հարսնյակ է, պետք ե բաժբակի դաշտերը ջրել. ջուրը քանդում է կարաղրինալի վերը նկարագրած հարսնյակների բները, և այդ կոկոններից թիթեսներ դուրս չեն գալիս։

2. Ուժեղ վարակված առվույտի դաշտը հնձելիս, պետք ե բամբակի դաշտերին մոտ գտնված կողմերում թողնել 1—2 մետր լայնությամբ առվույտի չնաձված շերտ, վորպեսզի թրթուրները հավաքվեն այդ նեղ շերտում, վորից հետո քիմիական սիջոցներով պետք ե վոր չնչացնել։

բ. Պայքարի էմիմիական միջոցներ

Կարաղրինալի և առհասարակ բույր կրծող միջատների դեմ պայքարելու համար գործ են ածում այսպես կոչված ներքին ներգործության կամ աղիքալին թռույներ։ Այդ թռույների սիջոցով սրսկում կամ փողոտում ենք վեսաստուներով վարակված դաշտերի բույսերը. վնասատուները կրծելով այդ թռունափորված բույսերը, թռունափորվում են և սատկում. կարաղրինալի դեմ սրսկման սիջոցով պարագելու համար գործ են ածում պարիզյան կտաշչի լուծույթ, վոր պատրաստում են հետեւալ ձեւվ. լուրաչանչյուր մեկ գիղը (12 լիտր) ջրին վերցնում են 30 գրամ պարիզյան կանաչի փոշի և կրկնակի քանակությամբ չհանգըրած թարմ, լավուակ կիր։ Առանձին ամանում ջրի մեջ խառնում են պարիզյան կանաչի փշին, մի ուրիշ ամանի մեջ հանգցնուած են չհանգըրած կիրը և ավելացնում են այնքան ջուր, վոր ստացվի կրակաթ, վորից հետո կրակաթը և պարիզյան կանչը խառնում են մնացած ջրի հետ և փալտով շատ լավ խառնում։

Պատրաստված լուծույթով նույն որր պետք ե սրսկել կարաղրինալի թրթուրներով վարակված բաժբակի դաշտերը։


Սրսկումը պետք ե կատարել խաղաղ ժամանակ, վորպեսզի թռունափոր հեղուկը հավասարաչափ մանր կաթիլներով նստի բաժբակի տերեների

վրա: Կարաղրինայի թրթուրներն ուտելով այդ թունավորված բամբակի տերևները՝ թույնավորվում են և սատկում: Ներկայումս խորհրդային Միության զանազան միջատաբանական գիտա-հետազոտական ինստիտուտներում և փորձա կայաններում կատարվում են շատ սեծ աշխատանքներ՝ արտասահմանան և առհասարակ թանգարժեք պայցարի քիմիական նյութերը ուեր սեփական Խ. բնակչային Միության մեջ արտադրվող եժան քիմիական նյութերով փոխարինելու համար:

Այդ փորձերի նախնական արգլունքները ցույց են տալիս, վորմենք սոստիկ ազագայում բոլորովին կարիք չենք ունենա վնասատուների և հիվանդությանների դեմ պայցարելու համար արտասահմանից քիմիական նյութեր ներմուծելու: Հատկապես շատ լով արդյունքներ են տվել ֆորոր կոչված քիմիական նյութի զանազան միացությունները, վորոնք ունին մի շատ բարակ առավելություններ սկնդեղի թանգարժեք քիմիական միացությունների համեմատությամբ:

ԲԱՄԲԱԿԻ ԼՎԵՃԸ (ՇԻՐԱՆ)

Բամբակի աճման սկզբնական շրջանում դաշտում նկատվում են բուկսեր, վորոնք տարբերվում են սովորական, առողջ բամբակենոց նրանով, վոր ցողունի աճող մասը՝ դաշտը, վնասված, կուշ յիկած և



Նկ. 8. Բամբակի լվեճ:

լինում, վորի հետեան շով աճաւած ուղբն սկան շրջանում՝ հիվանդ բամբակեններն իրենց աճմամբ հետ են ընկնում: Այս հիվանդության արտաքին նշաններից մեկն ել այն ե, վոր շաքիլային տերևները, շնորհիվ ցողունի գագաթի վնասված լինելուն, շատ յերկարացած են լի-

նում, այդ վնասված օների պատճառը փոքրիկ հասարակ աչքով տեսանելի կանաչ կամ գորշ գույնի միջատները-լվիճներն են: Լվիճները ձմեռում են՝ հասուն վիճակում, դաշտում լիղած մոլախոտերի և այլ բուսական մնացորդների վրա: Գարնանը, յեղանակները տաքանալուց հետո, սկսում են սնվել և արագ բազմանալ մոլախոտերի վրա, իւկայս աշղից, յերբ բուսնում և բամբակեններն, քաշվում են նաև վերջինիս վրա և առաջ բիրում վերը հիշված վնասված օները:



Նկ. 9. Լվիճից վնասված բամբակենի:

Բամբակի լվիճը տարբերվում է բամբակի մյուս վնասատուներից նրանով, վոր լվիճների արուն հալտի չե և սրանք բազմանում են առանց բեղմանության, կուսական ճանապարհներով:

Հասուն թեավոր կամ անթե եգ լվիճները ծնում են բազմաթիվ մասը լվիճներ, վորոնք ամառվա տաք յեղանակներին արագ կերառվ հասունանում են և սկսում գաբճյալ նույն յեղանակով բազմանալ: Այդ չափազանց արագ բազմանալու ընդունակությամբ և բացատրվում ալդ

լերեռյթը, վոր լվիճները մի քանի որվա ընթացքում բամբակի տողի դաշտը վարակում են այսպես, վոր անհրաժեշտ և լինում քիմիական պայմանագրի կաղմակերպման դիմեր

Լվիճը հայատանում բամբակի չոռի նման տարեկան տալիս ե 15—18 սերունդ, վորոնցից բամբակի համար գտանգավոր են միայն մայիս-հունիս ամիսների սերունդները։ Հայատանում բամբակի լվիճը տարածված ե բամբակագործական բոլոր շրջաններ ու և բացի բամբակից, խոշոր վնասներ ե հասցնում նաև մի շաբաթ բանջարանոցալիքներու սերի, ինչպես որինակի, վարունգին, սեփին և այլն։

Ինչպես վերեւում անսանք, բամբակի լվիճի հասցրած վնասն այն ե, վոր բամբակի մատղաց ցողունները վնասելով, խանգարում ե նորումալ զարգացման, վորը հետեւանքով բամբակի աճումը զգալիորեն նետ ե ընկնում, հատկապես լվիճի ուժեղ տարածման տարիներին։

ՈԲԴ, ի տվյալների համաձայն, 1931 թվին բամբակի ցանքսերի տարածության մոտ 50% Հայատանում վարակված ե յեղել լվիճներով։ Շատ ուժեղ վարակված ե յեղել 310 հետար բամբակ, վորի վրա և կազմակերպված ե յեղել քիմիական պայքար։

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Բամբակի մյուս վնասատուների դեմ պայքարելու համար հանձնարարության պայքարի ազրոկուլտուր միջոցները պետք ե կիրառել նաև այս վնասատուների դեմ պայքարելու համար, հատկապես ուշը դարձնելով մոլտիպերի դեմ պայքարելուն։

ԹԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Լվիճների և առհասարակ բոլոր ծծող տիպի բերան ունեցող վնասատուների դեմ պայքարելու համար գործ են ածում այսպես կոչված կոնտակտ կամ արտաքին աղդեցության թույներ։ Ուրիշ խոսքով՝ գործ են ածում այնպիսի քի իական նյութեր, վորոնք կամ ծածկում են միջատների շնչառության անցքերը և խեղդաման անում։ կամ թույնը փոքրիկ մասնիկները շնչառության անցքերից ներ։ մտնելով՝ մարմի մեջ թունավորում են մարմինը ներսից և դարձալ առաջ բերում մաս։

Այդպիսի կոնտակտ թույների թվին են պատկանում՝ կանաչ սպոնթ լուծույթը, ծխախոտի եքստրակտը, անաբաղին-սուլվիատի միացությունները և այլն։ Բամբակի լվիճի զեւ պայքարելու համար լավ արդյունքներ ե տալիս կանաչ սպոնթ լուծույթը, վորը պատրաստում են հետեւալ կերպով։ լու բաքանչուր դույլ (12 լիտր) ջրին վերցնում են 300 գրամ կանաչ սպոնթ, թիշ գանակությամբ տաք ջրի մեջ իւռնում։ հետո խառնում մնացած ջրի հետ և սրսկիչ պատրաստներով սրսկում։

Վորպեսպի սապոնի լուծույթն աղդի լվիճների վրա, անհրաժեշտ սրսկումն այնպես կատարել, վորպեսպի հեղուկն անպայման ընկնի միջատների մարմնի վրա։ Այդ իսկ պատճառով սրսկումը պետք ե կատարել խաղաղ յեղանակներին, յերբ քամի չկա, յերբ հստրավոր և լուծույթը կանոնավոր կերպով սրսկել

Ներկայում բազմաթիվ գիտահետազոտական աշխատանքներ են կատարվում՝ գեֆիցիտային սապոնի փոխարեն ուրիշ քիմիական նյութեր գործ ածելու հատկապես լավ նախական արդյունքներ են ավել անաբաղինի զանազան միացությունները, վորոնք մտիկ ապագայում լայն չափով կակսեն գործածվել այդ պայքարի բնագավառում։


ԿՆԳՈՒՂԻ ԹՐԹՈՒՐԸ (ՎՈՐԴԸ)

Բամբակի այս վնասատուն ամենից շատ տարածված ե Աղրեղանում և նոր բամբակագործական շրջաններից՝ Խաղատանում։ Հայատանում, համեմատած մյուս բամբակագործական շրջանների հետ, ամենից շատ տարածված ե կուրզալուկում շրջանում; Վորտեղ մասսայական բազմացման տարիներին զգալի վնասներ ե հասցնում բամբակին։

Ըստ վնասատուն

ձմեռում և հարսնյախ վիճակում, հողի մեջ, 10—12 ս. խորության վրա, նախ քան հողի մեջ հարսնյախ դառնալը, կնդուղի թըրթուրները, հետազայումնարսնյակից զուրս յեկած թիթեռի՝ հողի յերես դուրս դալու համար, հատուկ անցք են պատրաստում։ Գարնանը, թիթուրների պատրաստած անցքերից, ձմեռած հարսնյակներից զուրս են զալիս կնդուղի թըրթուրի թիթեռները։

Նկ. 10. Բամբակենու կնդուղի թըրթուր վորոնք արել մարմ մտնելուց հետ մկանում են բուլսից բուլս թոչել և զանազան մոլախտերի վրա ձվեր ածել, ալդ ձվերից գարնանը 6—7 որ հետո դուրս են



գալիս թրթուրներ, վորոնք սնվում են մոլախոտելով, մեծանում և հարսնակ դառնում:

Կնգուղի թրթուրները, բացի բամբակենուց, վնաս են պատճառում կուլտուրական բույսերից նաև լեզվացորենին, սիսերին և մի շաբք այլ բույսերի: Հայաստանում կնգուղի թրթուրը տարեկան տալիս են 3—4 սերունդ, վորոնցից բամբակի համար ամենից վնասակարն են ողոստոս ամսվա թրթուրները:

Այս վնասատիփի թրթուրները շատ մեծ քանակությամբ ձվեր են ածում. միջին հաշվով ամեն մի եգ թիթեռ ածում և մոտ 1000 ձու: Կնգուղի թրթուրները փոքր հաստկում սնվում են բամբակի նուրբ տերեններով և սի քանի որից հատու, ինը բավական ուժեղանում են, սկսում են ծակել և մտնել կնգուղների և բացված կոկոնների մեջ:

Հաշված է, վոր ամեն մի թրթուր էր կյանքի ընթացքում կարող ե վնասն 15—20 կնգուղ և կոկոն, վորոնց մեծ մասը թափում են:

Այդ ե պատճառը, վոր կնգուղի թրթուրի ուժեղ բազմացման տարիներին բամբակի բերքը խոչով չափով պակասում է:

Նկ. 11. Վնասված կնգուղ:

ՊԱՅԹԱՐԻ ՄԻՋՈՑՆԵՐ

Բամբակի մյուս վնասատուների դեմ պայքարելու համար ինոր հուրդ տրված տպրոկուլտուր միջոցները մեծ չափով նպաստում են նաև այս վնասատիփի դեմ պայքարելու գործին:

Հատկապես չափազանց լավ արգունքներ ե տալիս ուշ աշնան վարը և ձմռան ջուրը, վորովհետեւ վարի և ջրի միջոցով հողի մեջ ձմեռված տրված տպրոկուլտուր միջոցները մեծ չափով նպաստում են նաև չափազանց լավ արգունքների դուրս դառնու պալու անցքերը վորով հարսնանքների մասին և գարնանը հարսնակներից դուրս լիկած թիթեռները չեն չնչանում են և գարնանը հարսնակներից դուրս դառնու պարողանում հողի յերես դուրս դառնու պարունակների մի մասն ել վարի կարողանում հողի յերես և ընկնում և ձմբան ցրտերից դարձաւ վորով չափանում:

ՔԻՄԻԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Ներկայումս կնգուղի թրթուրների դեմ պայքարելու համար գործ են ածում արսենաթթվալին կայլցիումի կամ կացքքափորային նատրիումի: Ամեն մի հեկտարին պետք ե փոշոտել 10 կիլոգրամ, փորի գործի:

շուրջ ան ժամանակ պետք ե պահպ նույն վերը հիշված փոշուման կանոնները:

Իմիմիական պայքարը պետք ե կազմակերպել այն ժամանակ, ինը թրթուրները դեռ չեն մտել կոկոնների և կնգուղների մեջ, հակառակ գեղցում պայքարը լավ արդյունքներ չի ատ:

ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐԻ ՀԵՏ ՎԱՐՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Բամբակի վնասատուների և առհասարակ գյուղատնտեսության բոլոր վնասատուների դեմ պայքարելու համար գործածվող քիմիական նյութերը միաժամանակ ուժեղ թուլներ են նաև մարդու և տնալին կենդանիների համար: Այդ պատճառով թունավոր նյութերի հետ գործ ունենալու ժամանակ պետք ե լինել չափազանց զգուշ և դժբախտ պատահարները կանխելու համար պետք ե կիրառել հետևյալ տարրական կանոնները:

1. Թունավոր նյութերի հետ յերկար ժամանակ գործ ունենալու համար անպայման հարկավոր ե ունենալ արտադրական հագուստ, վոր աշխատանքները վերջանալուց հետո պետք ե հանել թունի մասնիկները վրայից թափ տալ և լվացվելուց հետո միայն հագնել սովորական հագուստները:

2. Ծնչառության միջոցով չթունավորվելու և աչքերը պաշտպանելու համար անհրաժեշտ ե գործ ածել այսպիս կոչված ուսպիրատորներ-ֆիլտրներ և հասարակ ապակիուց պատրաստված ակնոցներ:

3. Յեթե մարմին վրա վերքեր կան, այդ դեպքում նախքան աշխատանքներն սկսվելը, հարկավոր ե վերքերը վերաբուժական թանձիքով կապել իսկ աշխատանքները վերջանալուց հետո թանձիքը փոխել նորով:

4. Աշխատանքները վերջացնելուց հետո և ընդմիջումներին, ուտելուց առաջ, պետք ե տաք ջրով և սապոնով շատ լավ լվացվել և մաքուր սրբիչով սրբվել:

5. Չափսպանց վատ բորբոքումներ են առաջ գալիս, ինը թունոտ ձեռներով ձեռք են տալիս մարմին միուս մտսերին. այդ իսկ պատճառով խիստ արգելվում ե լվացվելուց առաջ մարմին վորեւե մասին ձեռք տալ:

6. Ուտելու պաշարը և խմելու ջուրը պետք ե շատ հեռու պահել թունից՝ ուտելիքի և ջրի միջոցով չթունավորվելու համար:

Հաճախ անփուլթ վերաբերմունքի պատճառով թունավորվում և սատկում են մեծ քանակությամբ տնային անտառներ: Այդ անսեղի կորուստները կանխելու համար հարկավոր ե քիմիական նյութերով փոշուված, սրսկված և թունավոր գրավչանլութերը շատ տված դաշտում:

տերում և շրջակայքում առնվազն 20 որ անասուններ չթողնել: Յեթե
այս նախադգուշական միջոցները կանոնավոր կիրառվեն, այդ դեպքում
դժբախտ պատահարներ տեղի չեն ունենալ:

ՊԱՅՔԱՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԽԸ

Առհերդավին Միության մեջ գյուղատնտեսության և անտառային
բոլոր վնասատուների դեմ պարագելու աշխատանքները պլանավո-
րում և դեկափարում և Համամիութենական Հողգովոմատի կազմում
գանվող ՈԲՎ (Վեսօյօնու օբ'յենում ո բօրե ս վրեւտելյամ և բօրե ս
և անտառային անտեսական շրջաններում ունի տեղերում պայքարի
աշխատանքները կազմակերպող և դեկափարող հենակետեր: ՈԲՎ պայ-
մանագիր և կնքում ամեն մի կոլտնտեսության, խորհուտեսության և
այն շահագրգության հիմնարկությունների հետ, պարագել
համար անհարժեշտ քիմիական նյութեր, փոշոտիչ և սրսկիչ ապարատ-
ներ մատակարարելու, պարագաների աշխատանքներին մանագիտական դե-
կափարություն ցուց տալու և ալիք: Համաձայն Համամիութենական
Հողգովոմատի կոլեգիայի փորոշման, ամեն մի կոլեկտիվ և խորհրդա-
յին անտեսություն պետք և ունենա հատուկ անձնավորություն, վոր
պետք և ՈԲՎ-ի անմիջական դեկափարությամբ և աջակցությամբ պայքար
կազմակերպի տվյալ կոլտնտեսությունում կամ խորհուտեսությունում:

Գյուղատնտեսության վնասատուների դեմ պարագելու գործը
պահանջում և հասարակական կազմակերպությունների ամենալայն
աշխացությունը, առանց վորի անհնարին և հաջող պարագը վնասա-
տուների դեմ:

Այդ տեսակետից չափականց մեծ անելիքներ ունեն կատարելու
կոմիերիտմիության գյուղական բջիջները, ՊԱԶՀ-Ավիաքիմի բջիջները,
աշակերտական կազմակերպությունները, վորոնք պետք և ամենալայն,
ամենորյա մասնակցություն ունենան վնասատուների դեմ պայքար-
լու աշխատանքներին:

ԲԱՄԲԱԿԻ ՈՏԱՐԵՐԿՐՅԱ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Բամբակի բուլու, բացի վերը հիշված վնասատուներից, վնասվում
և նաև բազմաթիվ ուրիշ վնասատուներից:

Համաշխարհական մաշտարով բամբակի ամենավտանգավոր վնա-
սատուները, վորոնք իրենց մասսայական բազմացման տարիներին վո-

չնչացնում են բամբակի բերքի 50—70% հետեւյալ յերեք վնասատու-
ներն են համարվում.

1) Բամբակի կնդուղի վարդագույն թրթուրը (րոզով կորունի չեր-
շաբախի շաբախի շերտագույն թրթուրը)

2) Բամբակի կնդուղի փշապատ թրթուրը (խլոպոկով կորու-
նի շիպովատի շերտագույն թրթուրը):

3) Մեքսիկակի յերկարակնճիթ՝ բամբակի վնասատուն (մեքսի-
կան խօլոպոկով դոլց էնիկ):

Բարեբախտաբար մինչեւ ալժմ բամբակի այդ վերոհիշտ վնասա-
տուները, բացի բամբակի փշապատ թրթուրից, Խորհրդական Միու-
թյան մեջ դեռ չեն հայտնաբերված:

Սակայն վարակման վասնգը չափազանց մեծ ե, վորովհետև մեր հա-
րսկան յերկրներում այդ վնասատուների մի մասն արդեն հայտնաբերված
ե և վոչ մի գրավական չունենք կարծելու, վոր այդ վնասատուները մեզ
մոտ ևս չերեան:

Հատկագիտ վարդագույն թրթուրի մասին պետք ե ասել, վոր
թեև դեռ այդ թրթուրը մեզ մոտ հայտնաբերված չե, սակայն մեր
բամբակագործական շրջանների վարակման վասնգը չափազանց մեծ ե,
վորովհետև մեր հարեան թյուրքիայում այդ վնասատուն արգեն զգալի
վնասներ ե հասցնում:

* Բամբակագործական սահմանամերձ շրջանների հետազոտության
ժամանակ, 1930 թվին, Նախջեանի Սև Հանրապետության բամբակի
դաշտերում փշապատ թրթուրն արգեն հայտնաբերվել ե: Ամենայն հա-
վականությամբ այդ վնասատուն անցել ե Պարսկաստանից, վոր-
տեղ ևս ալդ վնասատուն զգալի վնասներ ե հասցնում բամբակագոր-
ծության:


Ներկայումս Համամիութենական բույսերի պաշտպանության ինս-
տիտուտի կողմից Նախիջեանի հանրապետության տերիտորիայում կա-
տարվում են գիտահետազոտական աշխատանքներ, այդ վնասատի-
բույսի մեր պայմաններում ուսումնասիրելու և համապատասխան
պայքարի միջոցներ մշակելու համար: Բացի այդ, վորպեսզի կնդուղի
փշապատ թրթուրը Նախիջեանից չանցնի Խորհրդային Միության մյուս
բամբակագործական շրջանները, ՈԲՎ-ի կողմից մի շաբք կարանտին
միջոցներ են հեռա առնված:

Ընդհանրապես ալդ ոտարերկա վնասատուների տարածման դեմ
պայքարելու համար ձեռք են առնվում կարանտին միջոցներ, այսինքն
ալդ վնասատուներով վարակված շրջաններից ստացվող բոլոր բամբա-
կի բեռները յենթարկվում են զեզիքեկցիալի, քիմիական նյութերի
ներգործության, վորոնց շնորհիվ բամբակի բեռներում յեղած կենդա-
նի վնասատուները և նրանց ձկերը վոչնչացնում են:

Վորպեսղի հնարավոր լինի գաղտփար կազմել ալս վնասատուների տնտեսական նշանակության մասին, բավական և հիշել հետեւաբթվերը.

Հուսիսաւին Ամերիկալի Միտցալ նահանգների հողագործության մինխստրության տվյալների համաձայն, 1916 - 1920 թ. թ. 4 տարվա ընթացքում Մեքսիկալի յերկարակնճիթ՝ բամբակի վնասատուն հյուսային Ամերիկայի բամբակագործությանը 300,000,000 դոլարի վնաս և հասցրել, Բամբակի կնդուղի վարդագույն թրթուրով վարակված շըրջաններում ամեն տարի միջին հաշվով բամբակի բերքը պակասում է 25% ով և ալլն:

Այդ ե պատճառը, վոր Խորհրդաւին իշխանությունը չափաղանց մեծ ուշադրություն և դարձնում բամբակի կարանտինի աշխատանքներին, վորպեսղի բամբակի վերոհիշտալ վնասատուները լայն չափով չտարածվեն Միության բամբակագործական շրջաններում:



Գետիքատի տպարան
Գլավլիս 7465 (թ)
Հրատար. № 2186
Պատվեր 1364
Տիրած 4000

Մրագրիներ՝ Հ. Սարիկյան, Ա. Ճուղուրյան

Հանձնված ե արտադրության 16/IV 1932 թ.
Սուրագրված ե տպագրելու 8/V 1932 թ.

«Ազգային գրադարան»



NL0282699